***Մարզպետ Աշոտ Ղահրամանյանի շնորհավորական ուղերձը Մայրության և գեղեցկության տոնի առթիվ***

Սիրելի Կանայք, մեծագույն սիրով շնորհավորում եմ բոլորիդ մայրության և գեղեցկության տոնի առթիվ: Յուրաքանչյուրիս համար մայրական աղոթքով ու օրհնանքով է սկսվում ամեն մի նախաձեռնություն ու նրանով է ոչ միայն չափվում, այլև զարգանում ու տարածվում բարին, լավն ու գեղեցիկը:

Ձեզանով է պայմանավորված մարդկային հարաբերությունների ներդաշնակությունը, ընտանիքի ամրությունն ու երջանկությունը: Իսկ այս օրը ևս մեկ պատեհ առիթ է երախտիքի, գնահատանքի ու մեծարանքի խոսքեր հղելու ձեզ և արժևորելու ձեր անգնահատելի դերն ընտանիքում, աշխատավայրում և հանրային կյանքում:

Կրկին շնորհավորելով ձեզ գարնանային այս գեղեցիկ օրվա առթիվ՝ մաղթում եմ քաջառողջություն և անսահման երջանկություն: Թող արևի ջերմացնող շողերը հույսով ու հավատով լցնեն ձեր հոգիները: